

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ: — «ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԻ»: Պօլսական բարքեր.  
Կ. Պօլիս: Տպագր. Արևելք և Մասիս լրացրաց, փոքր քառածալ,  
531 երես, տառ. № 10. 1888 թ., զինն է 12 դուրուշ (մօտ 1 րուբլի):

Մեր առաջը դրած գրքի տիպն  
ու թուղթը, հակառակ տաճկա-  
հալոց վերջին տարիների տպագրու-  
թեանց, մաքուր և գեղեցիկ է. մեզ  
համար գրաւիչ է տաճկահակ գրակա-  
նութեան մէջ ալսպիսի նոր երեսնթը:  
Վերջին տարիներս Տաճկաստաճի  
հայ մամուլը, կարծես խօսքը մին ա-  
րած՝ պարապած է բացառապէս Փրան-  
սիական աղմկավոլ, արկածալի ոօ-  
մանների թարգմանութիւններով, մի  
կողմը թողած լրջամիտ գրւածներ,  
իրական կեանքի կենդանի պատկեր-  
ներ, հայ առտնին և արտաքին կեն-  
ցաղափարական գիտելիք և ազն:

Չենք ուրանում, երբեմնապէս մի  
մի Սրուանձտեաններ փալում են  
նրանց հօրիզոնի վերակ. բաց ալդ-  
պիսինները շատ սակաւ են և ան՝ գա-  
ւառացիք. մալքաքաղաքի և Զմիւռ-  
նիակի մամուլները, կարծես չեն տես-  
նում իրանց շուրջը հայի հոծ բազ-  
մութիւնը:

Ուրախ տրամադրութեամբ, ուրեմն,

մենք կարող ենք շնորհաւորել պ.  
Տիգրան կամսարականի վստահ և  
լաջողած քալը:

«Վարժապետին աղջիկը» մի լաջո-  
ղած գործ է վիպական ձեռլ Կ. Պօլ-  
սուկ հալոց բարձրակարգ դասի աղ-  
ջակին համացքը և նրանց ընտանե-  
կան կեղծ կենցաղը հրապարակ հա-  
նելու համար:

Վէպը գրւած է Կ. Պօլսուկ գրակա-  
նուկան բարբառով՝ համեմած ժողո-  
վրդական քաղցր և կենդանի ոճերով  
ու բառախաղութիւններով:

Վէպի համարօտ բովանդակու-  
թիւնն ասս է: — Անդրանիկ Ֆէնէրձեան  
ծերունի հայ վարժապետի միակ աղ-  
ջիկը (Աստղիկ), դասովիարակւած  
Ա...եան պեճամոլ դպրոցում (Երե-  
ւակ Ադապեան), ուսումն աւարտե-  
լուց լետու, հիամթափւում է իրա-  
կան կեանքի մէջ. դպրոցի դաշնակ-  
ները, կաքաւ ու պարը, շուալ շըր-  
ջաղղեսար չի գտնում հապենի աղքա-  
տիկ տնակում (վակ ան դպրոցին,

որ աշակերտական նստարանի վրա-  
վից շուալ պչըանքների է վարժեց-  
նում իւր սաներին) և սկսում է, հա-  
կառակ իւր ներքին ձգումների,  
պարզասէր ձևանալ՝ ծնողներին վիշտ  
ը պատճառելու համար:

Ծնողները լաւ հասկանալով իրանց  
սիրելի դստեր ներքին հակումները,  
իրանց կողմից ջանք չեն խնայում  
նրա ապագակն երջանկացնելու:

Աղջկակ բաղդը լաջողում է, մի համեստ  
երիտասարդ գործակատար, մի փոք-  
րիկ միջոցի տէր անձն, հանում է  
վարժապետին դժւար դրութիւնից,  
խնդրում է Ասողիկի ձեռքը և մեծ  
բաւականութիւն և բարեբաղդութիւն  
է համարում իւր համար Ասողիկի և  
նրա ծնողների հաճութիւնն սահնա-  
լը:

Պէտք է ասել, որ մի քանի տարի  
բաղդը խոռվել էր Անդրանիկ վար-  
ժապետից, բայոր հաւ գործիչները՝  
էֆէնդի, աղաս, բէս, աղգապին ժողով-  
ների անդամներ, դպրոցական հո-  
գաբարձուք, կարծես միաճախ երես  
էին թեքել նրանից, բայոր դպրոց-  
ների դռները փակել էին նրա առաջ  
և այն մարդը, որ երիտասարդութեան  
առուդ տարիներում երկար և շատ  
երկար միջոցներ ղեկավարել էր ժա-  
մանակակից երիտասարդութեանը  
իւր բանաստեղծութիւններով, իւր  
քնարական սրտաբորբաք երգերով,  
իւր գրգռիչ և ազգու դասախուու-  
թիւններով ոգեսորել էր կ. Պօլսոր բո-  
լոր հաւ դպրոցների սաներին և սա-  
նուճիներին, այս մարդն, ասում եմ,  
որ ծերութեան լետ էր մղւած ամնն  
տեղից, ընկճած զառն չքաւորութեան  
ծանրութեան տակ: (Հաւ վարժապե-

տի վերջին վլճակի ճիշդ պատկերն  
է այս ամենուրեք).

Ան այս դրութեան մէջն էր Ֆէ-  
նէրձեան պաշտօնաղուրկ ծերուճին,  
երբ Գարեգին Արսէնեան վլշեալ հա-  
մեստ գործակատարը ոչ միայն փե-  
սականալ է խոստանում նրան, այլ  
և ցանկութիւն է խալսում մնկենաս  
հանդիսանալ ալեսոր բանաստեղծին,  
խոստանում է տպել վարժապետի  
«Արարատեան փնջիկ» քերթւածքը:  
Այս դեռ քիչ է. Գարեգինը հաէրէն  
դասեր է գտնում ապագակ աներոջ  
համար իւր նախկին տիրոջ նահա-  
պետեան Յակովը ծերունի աղավի  
տանը՝ նրա երկու փոքրիկ զաւակ-  
ներին կրթելու:

Վարժապետը հոգեղմազլ խնդու-  
թեան մէջ է. Յակովը աղավի աղջիկը՝  
Աստղիկի դպրոցական ընկերունին,  
չորհ է անում հրաւիրել մեր թշւառ  
ալեսոր հայ վարժապետին դստերը ե-  
րեկովթի:

Վարժապետն իւր փեսացուից «Ա-  
րարատեան փնջիկ» գրքի տպագրու-  
թեան համար ստացած դրամը ծախ-  
սում է խնճուքի հանդիսին լարմար  
թերաքօլ (դեկուտէ) շրջադրեստներ  
շնելու, գեղապահուն չքեղութեամբ  
զարդարում է իւր սիրելի դստերը և  
տանում է Յակովը աղավի տունը:

Նահապետեանի Արամ որդին՝ Պա-  
րիսի փողոցներում ցոփ կեանք վա-  
րած, կլուբներում անառակ ընկեր-  
ների հետ թղթախաղով հօր փողերը  
վառելով արբացութեամբ քարշ ե-  
կած մէկը լաջողում է առաջին իսկ  
երեկովն շացնել Ա...եան վարժա-  
րանի սննդած սանին և արդ ու զար-  
դուց սենեկումը իւր լպիրչ հաճուա-

խօսութեամբ քաղում է նրա ճակատից Գարեգին Արսէնեանին պատկանած կուսական անդրանիկ համբովը:

Թեթևամիտ Աստղիկը մոռանում է իւր տւած խոսումը, և Յակովը ազալվ ապարանքի ճոխութիւններով լավաշակւած՝ ղեկավարում է դպրոցում արմատացած վնասակար հակումներով և իրան սիրող պարզ փեսացուին փոխում է հոմանիներով շըրջապատած զեղին Արամի հետ. նա միքանի օրից կին է դառնում Արամին:

Բարեբաղդութիւնը տեսողական չի լինում. դեռ «մեղաղուսինը» չը վերջացած՝ Արամն իւր ապականւած կեանքի անբաժան ընկեր Թորոս բէվ ստորաքարշ խարդաւանքներից թելադրւած՝ կրկին շարունակում է ծանօթութիւնները իւր նախկին տարփուհիների հետ և հետզհետէ հիասթափում իւր կնոջից:

Բէվ խորամանկութիւններն առանց պատճառի չէին. Աստղիկը նրա չար միտումների առարկան էր, բայց հակ վարժապետի աղջիկը որքան սծուն ուղղութիւն ունեցող մի զալոցի սան, իրեւ հակ ծնողների հարազատ դուստր, չի մնոցրած լինում զպրոցի մէջ տնավլն մանկական կրթութեան սաղմը. նա մինչև վերջին շունչը զիմաղըում է զալթակղութեանը և լաջողում է:

Խե՛ղն կին, ամսւանական հաւատար-մութիւնը տանում է նրան զէպի կործանումը: Աստղիկը նոր է զղջում իւր անհամապատասխան ընարութեան վերաբէ, զգում է իւր թեթեամիտ արարքը և լանցանքը ազնւամիտ Գարեգին դէմ, որը ալֆմ արագաքալ լառաջանում էր վաճառա-

կանական ասսպարիզում և նշանաւոր սեղանաւոր էր. վայ է տալիս Աստղիկն իւր զվարին, բայց եղածն եղել է. նորածին զաւակը դառնում է իւր միակ միախարութիւնը ամուսնու արհամարհանքների և պատճառած նեղութիւնների դէմ:

Գործում է Թորոս բէվը. նա ալֆմ նախանձով, արիւնավից աշքերով մի թով կնոջից վրէժ առնելու է տըքնում և կարողանում է. աճնեղն է հասցնում, որ ոչ միայն Արամի աշքում կասկածելի է անում իւր կնոջը, զրպարտում է, սուս վկաներ է ներկաշցնում, ոչ միայն վերջապէս արտաքսել է տալիս տանից, ալլ կրօնական և դատաստանական ժողովների վճռով ամուսնաթող է անում և խում է երեխավին մօրիցը:

Բէվ իւր դառը թոնը թափեց. ալֆմ նրա չար ոգին գոհ է, իրան մերժող գոռող կինը բարակացաւով մեռնում է և ապ դրամավին վերջ է դրւում:

Ինչպէս տեսնում ենք, նիւթը կեանքի մէջ կատարւած սովորական երեւովթներից է առած. բայց պ. Տիգրան Կամսարականի սահուն: և կոկ գրչի ներքոց, նրա զօրեղ (և մասամբ) եւրոպական վէպերից փոխ առած) երեակացութեան շնորհիւ դուրս է եկել մի պատական գործ:

Լեղուն, ինչպէս ասացինք, ճոխ է և սահուն, նկարադրած տեսարաններն և պատկերները փալուն և ճշդրիտ:

Շատ լաջող են պատկերացրած նախկին հակ վարժապետի և հին աղաների և բոլոր ժողովրդի լարարերութիւնները, վերջին ժամանակնե-

րիս դպրոցական կերպարանավոխութիւնը և Ա...եան օրիորդական վարժարանի տաւած թիւր կրթութեան կորստաբեր հետեանքը, նորապէս և հայ վարժապետի անմիջիթար վախճանը, կ. Պօլսու բարձր հայ դասակարգի հալութիւնից շեղուլը և եւրոպական կեղծ քաղաքակրթութեան մէջ խեղդւիլն ու ոչնչանալը».

Մենք պ. Տ. Կամսարականի գրքիցն ենք իմանում, թէ Պօլսու մեր աղաներն ինչ տնավին կենցաղավարութիւն ունին, ի՞նչպէս են վերաբերում նրանք ազգապին զործերին և օտարամոլութիւնը ուր է հասցըել նրանց:

Դուրս է զայիս, որ մեր մնձահըռչակ նահապետեան Յակովիր աղան եղել է սկզբումը Կարինից եկած մի հասարակ գիւղացի մշակ, որ զանազան ստոր միջոցներով հարստութիւն է դիզել և ակսօր Պօլսու, աեթէ ոչ ազնուադոյն, գէթ ազդին մնծափարթամ ընտանեաց մինն կը համարուիր—ասում է պ. Կամսարականը:

Եւ սա, աւս գոեհիկ և անկիրթ գիւղացին, թէ ինքը աղալութեան օրով չի մուացել իւր խոշոր և կաշեալատ Աստուածաշունչը միշտ կարդաւ բաց իւր նիստ ու կացը, իւր ապարանքը, իւր կենցաղը փոխել է ալա Փրանք կա, ուսում է ալա Փրանք կա, կահաւորւում է ալա Փրանքա, զաւակները կրթում է ալա Փրանքա, իսկ իւր երկու փոքրիկ զաւակների համար հայ վարժապետ հրաւիրելը

ձեականութեան պէս մի բան կատարելու համար է եղած, որ չ'ասեն թէ Յակովիր աղան ազգասէր չէ:

Ակապէս էր Ֆէնէրմեան վարժապետը. դաս չը տաւած՝ իւր ամսականներն սկզբից սոտացաւ և ոչ մի դաս չը կարողացաւ տալ:—Ակար դաշնակի վարժուհին է եկել, միւս օրը մանուկներն զբաղւած են, երրորդ օրը սառը խօսքեր ու արհամարհանքներ, այն կողմը Յակովիր աղակի մնծ որդին՝ Արամը հեղնում է վարժապետին և իւր գործերը, ակստեղ օրիորդ Նահապետեանը վարժապետի բերած տետրակը տալիս է իւր փոքրիկ քոլք Ելլողափ ձեռքը՝ կատուի վիզը փաթաթելու, նա խնդում է հակերէն կոչտ բառերի վերաէ և կոտրատում է Փրանսերէն լեզւով:

Միանգամանի համակրելով պ. Կամսարականի բռնած ուղղութեանը, խորհուրդ ենք տալիս կարդալ նրա Ալարժապետին աղջիկն» վէպը, և ներողամիտ գտնւել դէպի մի քանի թերութիւնները:

Վստահ կարող ենք ասել, որ եթէ պ. Կամսարականը շարունակելու լինի իւր ալս ձեռվ գրած աշխատութիւնները, նա մի օր փալուն տեղ կը բռնէ մեր գրականութեան մէջ:

Դիրքը իւր հաստութեանը նակած շատ բարեխործութեամբ է գնահատւած: